Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ (Պ-855[1]-05.02.2021-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Աժ պատգամավոր Արտաշես Պետրոսյան	Ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև փոխհոսքերի կարգը սահմանող հավելվածի 1-ին կետ	Նախագծի հավելվածի 1-ին մասը լրացնել «հաշվարկային տարի է համարվում յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ից մինչև ապրլի 30-ն ընկած ժամանկահատվածը:» նախադասությամբ,	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Աժ պատգամավոր Արտաշես Պետրոսյան	Ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև փոխհոսքերի կարգը սահմանող հավելվածի 1-ին կետ	Նախագծի հավելվածի 1-ին մասը լրացնել «վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի կողմից օրվա ընթացքում՝ հանձնաժողովի սահմանած սակագների համապատասխան բաշխողին առաքված էլեկտրիաէներգիայի ծավալները հաշվանցվում (նվազեցվում) են՝ սակագնի իջեցմանը (բարձրից՝ ցածր) համապատասխան՝ վերջինիս կողմից նույն ժամանակահատվածում սպառած էլեկտրիաէներգիայի ծավալներից՝ տարեկան	Ընդունվել է:	Ընդունվել է:

			վերջնահաշվարկի արդյունքում» նախադասությամբ,		
3.	ԱԺ պատգամավոր Արտաշես Պետրոսյան	Ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև փոխհոսքերի կարգը սահմանող հավելվածը՝ 8-րդ պարբերություն	Նախագծի հավելվածի 8-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ «վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողը՝ բաշխման լիցենզիա ունեցող անձի հետ կնքած պայմանագրի համաձայն, վերջինիս օժանդակությամբ և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած կարգով, իր արտադրած էներգիան կարող է սպառել այլ վայրում գործունեություն ծավալելու նպատակով, եթե տվյալ վայրում հնարավոր չէ ապահովել էլեկտրաէներգիայի արտադրություն և/կամ նախորդող 12 ամիսների ընթացքում առավելագույն էլեկտրաէներգիա սպառած ամսվան համապատասխան հզորությամբ էլեկտրաէներգիա արտադրելու անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով օգտակար տարածքները մակերեսի համապատասխան ծավալների բացակայությունը» բովանդակությամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է: